ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ՄԱՔՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/33-3 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 03 օգոստոսի 2018թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Համաձայնագրի առարկան

1. Նկատի ունենալով, որ ֆինանսների նախարարությունից ստացված 22.06.2018թ. թիվ 03/26-1/11320-18 գրությամբ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի հետ 11.06.2018թ կնքված տնտեսական ապրանքների (մաքրող նյութեր) մատուցման պայմանագիրը, այսուհետ «Պայմանգիր», դրական եզրակացություն չի ստացել և հիմք ընդունելով 01.08.2018թ. կողմերի միջև կնքված N 1 համաձայնագիրը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1 ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն լուծել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/33-3 ծածկագրով գնման Պայմանագիրը:

1.2 Պայմանագիրը լուծելու պահից դադարեցնել կողմերի պարտավորությունները:

2. Համաձայնագիրը կազմված է մեկ թերթից, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Համաձայնագրի հետ կապված կողմերի իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«ՌԵԱԼ ԲՈՒՍԻՆԵՍՍ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8	ք. Երևան, Աէրացիա 1շ. 59 բն.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011019313	Հ/Հ 220300124561000
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 02254149
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Վ. Օհանյան	_____ Հ Մարտիրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ